Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

12086

656.8
Σ-94

18827
656.8
Հ-94
2062
346
2011
6503-53

Իսկականի վրա դրված է
«Հաստատում եմ».
Փոստի և Հեռագրի ժողովրդական
կոմիսարի տեղակալ՝ Լյուբովիչ.
1925 թ. ապրիլի 4.

ՀՐԱՀԱՆԳ

Փոստ-հեռագրական այն աշխատավորների եւ կառապանների համար, վորոնք փոստը ուղեկցում են տրակտով եւ խճուղու ճանապարհներով.

1. Փոստ-հեռագրական այն աշխատավորները և կառապանները, վորոնք նշանակված են փոստն ուղեկցելու, պատասխանատու են իրենց հսկմանուն հանձնված փոստային բեռների ամբողջության և պահպանության համար, սկսած նրանց ընդունման վայրկյանից, մինչև վերջնական կետում հանձնելու վայրկյանը։ Այդ ժամանակամիջոցում նորա հանդիսանում են վորպես պետական արժեքների պահպանության պահակայիններ, վորի համապատասխան էլ սահմանվում է նրանց պատասխանատվությունը սույն հրահանգի խախտման և այլ զանցանքի կամ հանցագործությունների դեպքում։

2. Փոստ-հեռագրական այն աշխատավորը, վորն նշանակված է ըստ կարգագրի փոստն ուղեկցելու, պետք է պատշաճ ժամանակին ներկայանա փոստն ուղարկող փոստային ձեռնարկությունը, համաձայն տեղական պայմանների և փոստի յերթևեկության ժամկարգի ժամկետի։ Փոստը վիշերն ուղարկելիս, յերբ նրա ընդու-

ՀԱՅԿ. ՀԱՆՐԱՊԵՏ. ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՌ ԱԿԱԴԵՄԻԱ

նումն կատարված է դեռ նախընթաց օրվա յերեկոյան և ընդունումից հետո գրված է պահեստանոցը, ուղեկցողն այդ դեպքում պետք է ձեռնարկություն ներկայանա այնպիսի հաշվով, որ նրա նախընթաց օրն ընդունած և տարման համար արդեն պատրաստի այդ փոստը սահմանած ժամկետին բեռնվի և ուղարկվի։

3. Ուղեկցողը փոստի ընդունմանը ձեռնարկելով՝ նախապես պետք է մանրակրկիտ կերպով զննի տարվելիք բոլոր փոստային իրերը, որպեսզի համոզվի, որ արտաքուստ հիանալի (պոնարուժն) կաշյա իրերի, պարկերի, ծանրոցների, փոստ-ծրարների ծրարումները կատարված են ճիշտ և կանոնավոր և այնուհետև, յերբ նա կհամոզվի, որ այդ բոլորն արտաքուստ կանոնավոր են, կատուգի իր զննած ամբողջ փոստի գրանցումը՝ ըստ փաստաթղթերի։

4։ Փաստաթղթերի համաձայն՝ փոստը ստուգելուց հետո (առձեռն իրերի համապատասխանություններ՝ գրանցումների հետ), ուղեկցողը պետք է կարգադրի պատճենում ստորագրի փոստի ընդունման համար, հիշատակելով փոստային բեռների անունները, օրինակ՝ «մի չեմոդան, յերկու պայուսակ, հինգ ծանրոց և յերեք փոստ-ծրարներ՝ 3800 ռուբլի գումարի, ընդունեցի փ.-հ. աշխատավոր Սմիրնով։

5. Ուղեկցողն անմիջապես իրեն տրամադրած արկղիկի կամ կաշյա և բրեզենտի պայուսակի մեջ է դնում իր ընդունած փոստի փաստաթղթերը, գրամական փոստ-ծրարները այն թղթակցություններով միասին, որոնք գրանցված են որպես տարտաքուստ հետևող և այնուհետև կոզպում է արկղիկը, կամ մեր է քցում պայուսակի թողկանները։

6. Ուղեկցողը, պետք է փոստ ուղարկող վարիչից, ստանա տարճանակ իրեն պատկանելիք լրիվ փամփուշտներով և տրակտի վրա գտնվող փոստարկղների բանալիները, նրանց նամակները միջից հանելու համար։

Ծանոթություն։ Փոստի տարողը պատասխանատու հսկողություն պետք է ունենա տարճանակի և փամփուշտների տարբի լինելու և ուղեկցողի անպայման զինավորման համար։

7. Ուղեկցողը կառապանի հետ միասին պետք է իր ընդունած փոստը հոգատար կերպով դարսի սայլակի մեջ, ձեռնարկության վարիչի կամ փոստն ուղարկող վարիչի հսկողությամբ։ Ուղեկցողը և կառապանը փոստի բեռները դարսելիս, պետք է հատուկ ուշադրություն դարձնեն, որ մեծածավալ իրերը վնաս չհասցնեն կամ չվիճացնեն փոստային այլ իրեր։

Ծանոթություն։ Մեծ փոստերի տարման և ընդունման կետերում, որտեղ կա բեռնակիրների հատուկ բնակավայր (կազր), փոստը բեռնում և դատարկում են բեռնակիրները, ուղեկցողի կամ փոստն ուղարկող վարիչի ցուցմունքներով ու հսկողության տակ։

8. Փոստի բոլոր բեռները դարսելուց հետո, պետք է ծածկել բրեզենտով և կապել թոկով։

9. Յեթե փոստն ուղարկվում է մի քանի սայլակներով և մի քանի փ.-հ. աշխատավորների ուղեկցությամբ, այն ժամանակ՝ ուղեկցողները պետք է գտնվեն սայլակներում տեղավորվեն այնպես, որ անպատճառ մի ուղեկցողը լինի առաջի սայլակում, իսկ միյուսը վերջի սայլակում, որպեսզի այդպիսով փոստի ամբողջությունը և պահպանությունը ապահովված լինի մշտական հսկողությամբ։

10. Փոստը, համաձայն ժամկարգի, մեկնում է իր նշանակման վայրը փ.-հ. աշխատավորի և կառապանի ուղեկցությամբ. իսկ խոշոր արժեքների առաքման դեպքում՝ ուղեկցում են նաև հատուկ պահապաններ, վորոնք նույնպես պետք է գրանցված լինեն ուղեթերթերում։

11. Այն արկանելով, վորտեղ սահմանված է ուղևորների (Խորհրդային ծառայողների) տեղափոխությունը փոստով, ուղեկցողը պետք է այդ ուղևորներին տեղավորի փոստի սայլակում, սակայն այն պայմանով, վոր նոքա առաքման վայրում գրանցվեն ուղեթերթերում։

12. Փոստն ուղարկելու ժամանակ պետք է պահպանվեն հետևյալ կանոնները՝ ա) փոստը պետք է գնա ժամկարգի սահմանած արագությամբ և այն մարշրուտով, վորը հիշատակված է փոստի յերթևեկության ժամկարգում։

Ծանոթություն։ Այն դեպքում, յերբ վորև է պատճառով անհնարին է փոստի յերթևեկությունը կատարել ժամկարգում նշանակված մարշրուտով, թույլատրվում է հատկապես դրա համար նշանակված մի այլ մարշրուտ։

բ) Ուղեկցող կառապաններին և փոստի պահպանության համար նշանակված անձանց, խստիվ արգելվում է քնել փոստի յերթևեկության ժամանակ և կամ կանգ առնել այնտեղ, վորտեղ այդ չի սահմանված ըստ ժամկարգի. հարբած վիճակում նկատվածները, պետք է առաջին հանդեպակած փոստային ձեռնարկության մեջ, փոխարինվեն ուրիշով. ըստ վորում՝ փոստն ուրիշին հանձնելու դեպքում արձանագրություն է կազմվում և միևնույն ժամանակ՝ ըստ փաստաթղթերի ստուգվում է փոստը և նրա ամբողջությունը։

Ծանոթություն։ Փոստով մեկնող ուղևորները չպետք է նեղացնեն ուղեկցողներին, յերբ նրանք իրենց պարտականություններն են կատարում, այլ պետք է յենթարկվեն նրանց բոլոր պահանջներին։

գ) Ուղեկցողը ինքը չպետք է սայլակի վրա վերցնի վորև է քաղաքացի կամ թե կառապանին ու փոստը պահպանող անձին թույլ տա վերցնելու նրան, յեթե նա ուղեթերթում չէ նշանակված և նույնպես յեթե նա դրա համար հատուկ իրավունք չունի.

դ) Նաև փոստով տանելու համար՝ չպետք է ընդունել կարգադրում չնշանակած զանազան իրեր ու չվճարված թղթակցություններ, բացի կանոններով թույլատրված փոստով մեկնող Խորհրդային պաշտոնյաների ձեռքի վոչ մեծ բագաժը և ուղեկցողի, կառապանի կամ փոստը պահպանող անձնավորության ճանապարհի համար անհրաժեշտ ուտելիքները։

Ծանոթություն։ Փոստանիշերի վաճառման կետերում, ուղեկցողները կարող են վճարված հատարակ նամակները ընդունել, սակայն վորի համար՝ չի թույլատրվում կանգ առնել՝ այնպիսի տեղեր, վորտեղ ժամկարգի համաձայն կանգ առման կետ չկա։

դ) Ճանապարհին պետք է, ըստ հնարավորության, շուտ շուտ հետևել փոստի կապոտած իրերի ամբողջությանը և սայլակի կանոնավորությանը։

ե) Առանձնապես պետք է շրջահայած լինել գիշեր ժամանակ, նաև գետեր ու ձորեր անցնելիս, մանա-

վանդ հեղեղումներին և այնպիսի դեպքերի ժամանակ, յերբ փոխադրմանը վանդ և ապահովում, ուստի պետք է անմիջապես կառապանի միջոցով տեղական իշխանությունից (միլիցիայից, գործկոմից, գյուղխորհրդից) խնդրել պատշաճ աջակցությունը։

թ) Մեկնող փոստը միմիայնայն կետերում պետք է կանգ առնի և փոստի փոխանակություն կատարի, փոստարկղների նամակները հանի և փոստանիշեր վաճառի, որոնք մատնանշված են փոստի յերթևեկության ժամկարգում։

ժ) Ձիաները փոխելու կետերում պետք է ուշադրություն դարձնել, որ նոր փոխվող ձիաները պետական լինեն փոստային վագրի համար։

ի) Ճանապարհին տեղի ունեցած բոլոր պատահարների մասին, այն է՝ այս կամ այն պատճառով փոստի ուշացման, նրա մնալու կամ թրջվելու մասին, անպայման գրավոր և համառոտ կերպով զեկուցանել ճանապարհի վրա ընկած մոտակա փոստային ձեռնարկության վարիչին, որը և պատշաճ դեպքերում՝ պետք է արձանագրություն կազմի. իսկ ուղեթերթերում կատարվում և համապատասխան գրառություն, որը միևնույն ժամանակ հաստատվում և նաև փոստն ուղեկցողի ստորագրությամբ։

լ) Ճանապարհին թրջված և առաջի ձեռնարկությունը բերված փոստը անպայման պետք է չորացնել որից հետո և ուղեկցողը պետք է տանի նշանակման վայրը. իսկ այն դեպքերում, յերբ չորացումը շատ ժամանակ կպահանջի, թրջված թղթակցությունը պետք է թողնել մինչև հետևյալ մարշրուտը։

խ) Փ.-հ. ձեռնարկություններում և կանգառման կետերում, յերբ փոստը ժամանում և փոխանակության համար, պետք է աչքաբաց կերպով հետևել, որ փոստը գտարկելու և բեռնելու ժամանակ, և գործատությունները կատարելու, փոստ-արկղները գտարկելու, փոստանիշեր վաճառելու, նաև անհետաձգելի կարիքների համար բացակայելու ժամանակ տեղի չունենա փոստի հափշտակություն, որի համար ձեռք առնել նախազգուշացման այն բոլոր միջոցները, որոնք կարող են լիապես ապահովել փոստի ամբողջությունը։

ծ) Ձիու լուրջ հիվանդության, սատկելու կամ սայլակը վնասվելու դեպքում և այլն, աջակցության դիմել հանդիպող քաղաքացիներին և նրանց միջոցով և գյուղական իշխանությունների ուղությունը խնդրելուց առաջի հնարավորության, պատահարի մասին տեղեկություն ուղարկել այդ ճանապարհի վրա գտնվող առաջի ձեռնարկությանը, որպեսզի վերջինս ձեռք առնի համապատասխան միջոցներ։

կ) Յերթևեկության ժամանակ իրեն ուղեկցողի լուրջ հիվանդության դեպքում՝ ճանապարհին ընկնող կապի առաջի ձեռնարկությանը հասցրած փոստը հանձնել այդ ձեռնարկության վարիչին, որը պարտավոր և միջոցներ ձեռք առնել, փոստը տրակտով առաջ մղելու։

Ծանոթություն։ Այն դեպքերում՝ յերբ փոստի ուղեկցողը հանկարծակի՝ ու սուր կերպով հիվանդանալու շնորհիվ՝ բոլորովին անկարող և շարունակել իր ճանապարհը և հետևապես ստիպված և կանգ առնել այն կետում, որտեղ հիվանդությունն և բռնել, կառապանը պիտի խնդրի տեղական իշխանությունից տրամադրել մի գործակալ միլի-

ցիոներ, վորը փոստը կուղեկցի մինչև առաջիկա փոստային ձեռնարկությունը, իսկ միլիցիոներ չարամտրելու դեպքում՝ կառապանն ինքը մենակ պետք է փոստը հասցնի մինչև այդ ձեռնարկությունը։

հ) Այն դեպքում՝ յերբ չարագործները փոստի վրա կհարձակվեն, ուղեկցողը, կառապանը և պահպանության համար նշանակված անձինք, պետք է փոստային բեռները պահպանելու համար ձեռք առնեն բոլոր միջոցները, իսկ անհրաժեշտ դեպքում՝ հարձակումը դիմադրեն զենքով։

ձ) Ճանապարհին չի թույլատրվում հրացանաձգություն կատարել, յերբ չկա փոստը պաշտպանելու անհրաժեշտությունը։

դ) Անպայման պետք է հանել տրակտի վրա ընկնող բոլոր փոստարկղների թղթակցությունները։

13. Յերբ փոստը գնում է այն տրակտով, վորի ուղղությամբ ընկնում է հեռագրական գիծը, փոստն ուղեկցողները պարտավոր են ճանապարհին նկատած կտրված հեռագրաթելերի և կամ հեռագրաթելերի միմիանց միջև հաղորդակցության մասին, փ.-հ. ձեռնարկությունը գալուն պես, անմիջապես հայտնել վարիչին։

14. Ուղեկցողը փոստն իր նշանակման ձեռնարկությունը բերելուց հետո, պարտավոր է ներկա գտնվել փոստային իրերը բացելիս և ստուգելիս։

15. Թղթակցությունների ֆնասվածներ կամ պակասումներ հայտարարելիս, ուղեկցողը պետք է ստորագրի ձեռնարկության մեջ կազմված արձանագրությունը

վորը նախապես կարդացվում է այն անձանց ներկայությամբ, վորոնք ներկա յեն յեղել փոստի բացմանը և ստուգմանը։

16. Փոստը վերջնական կետում հանձնելուց հետո, ուղեկիցը փոստի ստացման վարիչին է հանձնում նաև տարճանակը, փամփուշտները, իր մոտ ունեցած պայուսակը կամ արկղիկը և փոստ-արկղների բանալիները, վորից հետո միայն՝ նա համարվում է փոստի ուղեկցման իր պարտականությունը կատարած։

17. Փոստ վագոնների հետ անմիջականորեն փոխանակություն կատարելու դեպքում՝ ուղեկցողը պետք է նախ և առաջ վագոնից ընդունի փոստը և հետո միայն իր բերած փոստը հանձնի վագոնին։

18. Այն դեպքում՝ յերբ փոստ-վագոնի աշխատավորը հրաժարվում է ընդունել մի վորև է փոստային իր, շնորհիվ նրա անկանոնության կամ թե մի այլ պատճառով, ուղեկցողը պետք է պահանջի նրանից, փաստաթղթերում կատարել համապատասխան գիտողություններ։

19. Փոստի յուրաքանչյուր ուղեկցող, պետք է լավ իմանա սույն հրահանգը և փոստն ուղեկցելիս անպայման ունենա իր մոտ ու ամենայն խստությամբ առաջնորդվի սրա մեջ մեկնաբանած ցուցմունքներով։

ՀՍՍՌ Գրադ.ՍՍՌ

26/VII-26. ն.ն.մ.ղ.ն. պոլոգրաֆտր. 1-ի 9
ტფილისი. მთავარლიტი 1078. შეკ. 0

656·8
2-94

12086

R013